

ԱՄՍՆՈՐԻ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ

Աստղագիտությունն ու նրա ուղեկից տոմարագիտությունը վաղ ժամանակներից ի վեր լուրջ տեղ են գրավել զարգացած երկրագործություն վարած բոլոր ժողովուրդների գործնական կյանքում:

Գիտության զարգացման ցածր մակարդակի պատճառով նախնական աստղագիտությունն ու տոմարագիտությունը հանգես են եկել կրոնասուտաույելական պատկերացումների հետ միահյուսված: Հայ տոմարին վերաբերող սուղ նյութերն, օրինակ, պահպանած մասենագրական աղբյուրներն, անկախ րովանգակությունից («Հայսմավուրք», «Տոնացույց», տոմար, տիեզերագիտական և մաթեմատիկական աշխատություններ և այլն), ինչպես միջնադարում հոգեոր մշակույթի ամեն մի արտահայտություն առհասարակ, ունեն կրոնական երանգ:

Այս էր պատճառն, անշուշտ, որ չնայած տոմարագիտությունը ժողովուրդների զարգացման վաղագույն աստիճաններում լարգեն ձգտում էր ճշգրիտ, մաթեմատիկական որոշակիության, այնուամենայնիվ, անսալով ժամանակի պահանջներին, միջնագարյան Հայաստանի տոմարագիտականականներն աստղագիտության նվաճումների հետևանք տոմարագիտությունը ոչ միայն կուպում էին աստվածարանությանը, այլև իրենց գիտական հայտնագործությունները պարուրում էին աստվածաբանական առասպելներով:

Տիեզերագիտական առաջին գիտելիքներից էր գարնանային և աշնանային օրահավասարը, որոնց համընկնում էին երկրագործական աշխատանքների ամենակարևոր փուլերը: Գարնտնային օրահավասարով սկսվում էր սմրողջ աստվաբարեկենցությունը պայմանավորող անտեսական նոր տարին՝ երկրագործական-անասնապահական աշխատանքների սկիզբը, իսկ աշնանային օրահավասարով՝ ընթացահավաքով, փակվում էր այն: Բնականաբար, պետք է միաք առաջստնար տարին

և տարեպտույա առներն սկսել այդ կարևոր իրադարձությունները նշանավորող օրերով: Այդպես էլ ժողովուրդների մի մասը նոր աարին սկսված է համարում գարնանը, մյուսը՝ աշնանը: Եվ, անկախ տոմարական բոլոր կարգի փոփոխություններից, ինչպես վկայում են պատմաաղագրական տվյալները, ժողովուրդների կենցաղում հիշյալ երկու օրերը միշտ էլ պահում են իրենց սոնահսական նշանակությունը, հետևապես նաև տոնականությունը:

Ինչպես վկայում են գաշտային նյութերը, գարնանային և աշնանային օրահավասարի մասին ժողովրդական պատկերացումները զեռ պահպանվում են ժողովրդի հիշողության ընգերքում: 1957 թ. Բերդ գյուղից (Շամշագինի շրջան)՝ Բինո ըրծան, որ այն ժամանակ 108 տարեկան էր, հաաբերիր սեղեկություններ հաղորդեց: Գարնանային օրահավասարը ղնում էր մարտի 10-ին, որտեղից սկսած «...օրը կրարերարանա», այսինքն՝ գիշերն ու ցերեկը կհավասարվեն: Այդտեղից սկսած, «...րեքնակը աղաք կընգնի, սեպտեմբերի 10-ին (սր համարում են աշնանային օրահավասար) կհասնի քշերվա եննա: Սինչև գեկանմբերի 10-ր քշերը կտգնրմ ա, տարին փոխվիլ պաի»¹:

Սյս մաայնությունը նույն ձևով հանգիպում է Հայկական ՍՍՀ բոլոր շրջաններում՝ լգասմական Հայաստանի ամենասարբեր շրջաններից աեղահանված հավաժների կենցաղում:

Գարնանային օրահավասարի հետ ընություն մեջ կաաարվող փոփոխությունները մարգիկ սկսել են նկատել ղեռ վաղ ժամանակներից: Ամենակարևոր փոփոխությունը, որ օրահավասարի անմիջական հետևանքն է՝ ասաիճանարար

¹ Տե՛ս շՍՍՀ ԳԱ հնագիտության և աղագրության ինստիտուտի աղագրության բաժնի արխիվ (այսուհետև՝ ԱԲՍ), Ա. Ա. Օգաբաշյան, 1957 թ. Շամշագինի գիտարշավ, ա. Ձ 3, էջ 27:

ցերեկվա երկարելն ու դիշերվա կարճանալն է՝ իսկ առավել կարևորը՝ որն անդրադառնում էր մարդու տնտեսական ամրոզը դործունեության վրա, արեհի կենարար ճառագայթների աստիճանարար զորեղացումն էր, որ ազդարարում էր դարնային նշխատանքների սկիզբը թե՛ անաւնապահության և թե՛ երկրագործության մեջ։ Բնության այդ փոփոխությունները նկատելով, զարգացման ցածր աստիճանի վրա դտնվող մարդն, այդուամենայնիվ, իր նկատած երևույթների աուաչացման պատճառները և դրանց ճիշտ րացատրությունը չէր կարողանում դտնել, ուստի և ժամանակի դիտական դրականության մեջ դործնական ճիշտ դիտողությունները հանդես են դալիս կրոնադիցարանական պաճուճանքով։

Հայ միջնադարյան ձեռագրերից մեկում Ամանորը (Նոր տարի) պիտվում է մարտ ամիսը և կապվում արարչության սկզբնավորման հետ։ «Յառաջ քան զինել մարդոյն թուեցաւ թուական վերադիր հասաատեցաւ նահանջն և թ. Ժ երրական յեղանակեցաւ և ապա սահզծաւ մարդն։ Յառաջին ամին Ադամա հանդիպի վերադիրն ԺԵ, է-երրակն Ա. հասարակածն ի մարտի յԺ և առաջին ար արարչութեան, ի մարտի ԺԷ»²։

Այստեղից հետևում է, որ մարտ ամիսը դարերի ավանդությամբ Հայաստանում տարվա ևկիզը է համարվել։ Շարունակության մեջ պատմվում է, որ մարտի 20-ին աստված սահզծել է արեդակն ու լուսինը, և որ այդ օրը նաև զարնային հասարակածի (օրահավասարի) օրն է։ Սա մոտավորապես համընկնում է պաշտոնապես ընդունված զարնային օրահավասարին՝ մարտի 21-ին։

Ասկայն հայկական Ամանորի տոնակատարության ժամանակի հարցի մասին որևէ ևզրակացության հանգելուց առաջ փորձենք ի նորոքնարկել աոմարադիական հայտնի փաստերը։

Հայագիտության մեջ պարզարանված է հայկական օրացույցում նավասարդի դրաված տեղի հարցը։ Հայտնի է, որ հայկական ամիսների հերթական ցուցակում առաջին ամիսը կոչվում էր նավասարդ³, նավասարդ ամսվա հետ

են կապված հին հայերի Նոր տարվան՝ Ամանորին նվիրված տոնակատարությունները։

Հայկական ամիսների հերթական ցուցակն է. նավասարդ, Հոռի, Ահմի, Տրե, Քաղոց, Արաց, Մեհեկի, Արեդ, Ահեկի, Մարերի, Աարդաց, Հրոտից և Ավելեաց վերջին ամիսը, որ 5 օր է։ Հաճախ տարվա շրջապտույտի մեջ այս ամիսների հերթափոխման հաըցը պարզարանելիս հայ պատմադիրները դիմել են այլ ժողովուրդների տոմարների, հատկապես հոռմեական տոմարի համեմատությանը։ Հայտնի է, որ հոռմեական տոմարի առաջին ամիսը Մարտն էր⁴, իսկ հայկականում, ինչպես նշվեց՝ նավասարդը։

Արդ, տեսնենք, իրո՞ք այդ ամիսները միշտ զուգակշիռ են համարվել հայկական տոմարական դրականության մեջ։

Ընթերցողի ուշադրությանն ենք ներկայացնում տարրեր տարեթվերի միջնադարյան շրա տարբեր ձեռագրերից վերցրած հայկական ամիսների ցանկերը, համեմատած հոռմեական անշարժ ամսացուցակի հետ։

Աղույակ 1

Հոռմեական	Տոնացույց և լուսնացույց, (Միլլէ-1841, Վաթ քաղաք, ձեռ. № 8191)	Տոմար, տեղյան հայտ, ժոց-Ժողդ, ձեռ. № 1339	Մանրում և լուսնացույց, (Բժիշկ Գրիգորի-1873, Երևան, ձեռ. № 72)	Տոնացույց, ինչպես 1673, քաղաք ձեռ. № 6118
Հունվար	Հոռի	Մարդաց	Քաղոց	Արաց
Փետրվար	Ոհմի	Հրոտից	Արաց	Մեհեկի
Մարտ	Տրե	Նաւասարդ	Մեհեկի	Արեդ
Ապրիլ	Քաղոց	Հոռի	Արեդ	Ահեկի
Մայիս	Արաց	Սահմի	Սահմի	Մարերի
Հունիս	Մեհեկի	Տրե	Մարերի	Մարդաց
Հուլիս	Արեդ	Քաղոց	Մարդաց	Հրոտից
Օգոստոս	Ահեկի	Արաց	Հրոտից	Նաւասարդ
Սեպտեմբեր	Մարերի	Մեհեկի	Մեհեկի	Հոռի
Հոկտեմբեր	Մարդաց	Արեդ	Արեդ	Սահմի
Նոյեմբեր	Հրոտից	Ահեկի	Սահմի	Տրե
Դեկտեմբեր	Նաւասարդ	Մարերի	Տրե	Քաղոց

Ինչպես երևում է զուգահեռներից, նավասարդը միշտ չի զուգակշռում մարտ ամսին, որովհետև հայկական արեդակնային տարին ուղիղ 365 օր էր. մնացած 5 ժամ, 4 րուպե, 46

և թե՛ հայ տոմարի հարցերով զբաղվող այլ հետազոտողների (Մ. Օրմանյան, Լ. Սեմյոնով, Մ. Սրբահամյան և այլք) համար հիմք են ծառայել հայ մատենագրական տոմարական նյութերը՝ հիմնականում Ան. Շիրակացու և Հովհ. Իմաստասերի աշխատությունները։

⁴ В. А. Россовская, Календарная даль веков, М.—Л., 1936, стр. 31; О. Wimmer, Handbuch der Namen und Heiligen. Mit einer Geschichte des christlichen Kalendares, 1959, 29.

² Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ Մատենադարան), ձեռ. № 1999, էջ 48ր։

³ E. Dulaurier, Recherches sur la Chronologie Armenienne Technique et historique, t. I, Paris, 10—182 F. Ginzel, Handbuch der mathematischen und technischen Chronologie des zellrechnungswesens der völker, Leipzig, 1914, III B., 319. Թե՛ վերոհիշյալ հեղինակների

վայրկյանը տարիների ընթացքում կուտակվելով, տարբերություն էր տողացանցում օրացուցային և արեպականային տարիների միջև, որի հետևանքով էլ սխալներ էին առաջանում հայկական առմարի մեջ: Դրանք այնքան ակնհայտ են եղել, որ Հռոմի, Իմաստասեր XII դ. ստիպված, տոմարադիտական վիճարանություն է ծավալել հիշյալ խնդիրը պարզարանելու նպատակով:

Չնայած օրացուցային և արեպականային տարիների միջև եղած տարբերության պատճառով տարեմուտի ամսվա անդաշարժի և դրա հետ կապված տոմարական հաշիվների խառնվելու հնարավորությանը, հայ տոմարադետները միշտ էլ դիտական բարձր մակարդակով էին կատարում տոմարական բարդ հաշվարկները, հատկապես տարեմուտը որոշելիս, որ հայ տոմարի ամենաբարդ խնդիրներից էր⁵:

Անանիա Շիրակացին իր «Վստն ընթացից արեպական» ըստ կենդանատեսակացն եւ է դաւոնեցան, զոր կաարաէ ի տունքե/ա/ն յաւուրս ՏԿՆ եւ ժամս Գ» աշխատության մեջ⁶ ասադադիական տեղեկություններ է հաղորդում, թե երկնակամարում արեպակի դրաված դիրքի հետ կապված ինչպիսի փոփոխություններ կարող էին տեղի ունենալ տարվա ամիսների հետ, ըստ հերթական կարգի: Փաստորեն այդ ամիսների հերթական ցուցակն սկսվում է Մարտ ամսից: Պատահականություն չպետք է համարել սա, ե չի կարելի կարծել, թե Անանիա Շիրակացու նման խոշոր աստղադետ-տոմարադետն այդպիսի կարեոր մի հարց կլուսարաներ, սկսելով որեէ պատահական ամսից:

Այս ամբողջը ենթադրել է աալիս, թե միջնադարյան հայերի դիտակցության մեջ դեռես այնքան ամուր էր նսաած Մարտ ամսի, այսինքն՝ պարսնային օրահալստարը կրող նավասարդ ամսի տարեմուտի հետ կապված լինելը, որ նույնիսկ Շիրակացու ժամանակ ասարվա հետ աորնշվող հարցերի մասին խոսելիս, ասրեսկիղբը,

հնագույն ժամանակներից մնացած սովորության համաձայն, ընդունել են Մարտ ամիսը՝ դարնանային օրահալստարը: Ինչպես կտեսնենք հետո, այդ մտայնությունը ժողովրդի մեջ մնում է մինչև XIX դարը:

Տոմարական ընդթի աշխատությունների հետ առաջին իսկ ծանոթությունը ցույց է տալիս, որ մեր երախտավոր նախահայրերին հայտնի էին ոչ միայն ասադադիտության հետեանք տոմարադիտության նրբին դադտնիքները, այլև իրենց տեսական գիտելիքները դործնականում կիրառելը: Այդ երեում է մանավանդ այնտեղ, որտեղ նրանք տոմարական հաշվարկներով հայկական տոմարի թվերը վեր են ածում հուլյան տոմարի և հակառակը, մի րան, որ նրանց աուրյալում խիսա անհրաժեշտ էր՝ տոնական յուրաքանչյուր օր որոշելու կապակցությամբ: Եվ եթե նրանց առմարական այլեայլ ընդթի ցուցակներում հայկական ամիսը համապատասխանում է այլ ժողովուրդների դարնանային օրահալստարը կրող տարեմաի ամսին, ապա դա ոչ թե պատահականություն է, այլ հետեանք այն մտայնության, որ մի ժամանակ հայերի մեջ էլ դարնանային օրահալստարի ամիսը համարվել է տարվա սկիղբ՝ Ամանոր:

Հին ժողովուրդների մեջ դարդացման այն աստիճանում, երր օղտագործում էին լուանային տոմարը, նոր տարվա սկիղբը համարվել է դարնանային օրահալստարի օրը⁸:

Մասնադարանի 1999 ձեռաղրի 26-րդ էջում հոոմեական և հայկական ամիսների դուդադիր մի ցուցակ է դետեղված, որտեղ նավասարդ ամիսը դրված է հոոմեական Մարտ ամսի դիմաց:

«Ամիսը հայոց և հուռմի հանդէպ մի մէ.

նաւասարդի, որ է մարտի, հոոի, ապրիլի, սահմի, մայիս, արեայ, յունիս, քաղոց, յուլիս, Արաց, ալիսասոս, սեպտեմբեր, արեդ, հոկաեմբեր, ահեկի-նոյեմբեր, մարերի-դեկտեմբեր, մարդաց-յունուտր, հրոտից-փեարուարի»:

⁵ «Հռոմի. Իմաստասերի մատենագրությունը», ախատասիրությունը՝ Աշ. Արրահամյանի, Երեան, 1956, էջ 240, 266:

⁶ «Անանիա Շիրակացու մատենագրությունը», աշխատասիրությունը՝ Աշ. Արրահամյանի, Երեան, 1944, էջ 315—334: Հայ տոմարի պատմության և կրած փոփոխությունների մասին նորագույն ուսումնասիրություններից են՝ Երեան, 1964, Հ. Ս. Բաղայան, Օրացույցի պատմություն, Երեան, 1964, Հ. Ս. Բաղայան, Օրացույցի պատմություն Երեան, 1970:

⁷ Անանիա Շիրակացի, Տիեզերագիտութիւն եւ տոմար, Երեան, 1940:

⁸ Հին հրեաները պահպանել էին և՛ դարնանային, և՛ աշնանային օրահալստարին համընկնող նոր տարվա տոնը: Դրանցից առաջինով (նիսան ամիս) սկսվում էր կրոնական նոր տարին, երկրորդով (Քշրի ամիս)՝ քաղաքական նոր տարին (աե՛ս Ե. Պոդսյան, Նոր տարույ տոնը հին և նոր հայոց քով, Վիեննա, 1952, էջ 24, ինչպես նաև՝ Մ. Ալտ-շուլեր, Спор в иудейский новый год, М., 1961, стр. 59; Н. М. Никольский, Еврейские и христианские праздники, их происхождение и история, М., 1931, стр. 29—31; Н. Г. Баранов, Китайский новый год, Харбин, 1927; М. М. Нхилов, Горские евреи, М., 1949 (диссертация); М. М. Матее и Н. Шолло, Настоящее, прошедшее и будущее календаря, Л., 1931, стр. 4:

Այստեղ, նախ, ուշադրավ է հատվածի վերնագիրը. որն ինքնին խոսում է այն մասին, թե «Ցուցակի» հեղինակը նույնություն է տեսնում նավասարդի՝ հայկական Ամստերդի, և Մարտի միջև:

Տոմարի հեղինակին հասկանալի է եղել, որ նավասարդ ամսունում, որը հայերի մեջ հնուց ի վեր կապված է նոր տարվա սկզբի հետ, րնականորեն հոմանական ամսացանկում Մարտ ամսի դիմաց էր դրվելու, այն ամսի, որ հոմանագիները տարեմուտ էին համարում և որի հետ կապված էր դարնանային օրահավասարը:

Պարզ է նաև, որ դարնանային օրահավասարի ամիսը՝ Մարտ, և հայկական Ամստերդի կողմը՝ նավասարդ ամիսը, այդ ձևադրի հեղինակի համար իմաստային նույնություն ունեն:

Դրա լրիվ ապացույցը պահում ենք նույն 1999 ձևադրի 95ր—96ա էջերում: Այստեղ առմարի հեղինակը հերթական կարգով խոսելով տարվա ընդ որ ամիսների մասին, նշում է, թե ինչպիսի տարի է սպասվում, եթե տարվա ավել տմսի առաջին օրն այս կամ այն եղանակը լինի: Այդտեղ մեզ համար կարևորն այն է, որ հեղինակը ոչ միայն ամիսների ընդ որումն սկսում է Մարտից, այլև Մարտի և նավասարդի մեջ հավասարության նշան է դնում:

«Ի մարտի, որ նաւասարդի, եթե որոտա և դա ա/նձը/և մարդուն հիւանդութիւն է և մահ և դատումն և հալածանս հասանէ...»:

Նույն՝ 1999 ձևադրի 1ա էջում, XI դարի հեղինակ Հովհաննես Կողբունի առմարի «Պատճառք կրկնակի» գլխում ասվում է, թե ինչպես պետք է դնել ամիսների կրկնակը: Բնորոշ է, որ առմարագիական այդ բարդ հարցի մասին խոսելիս, հեղինակը դարձյալ հաշվումներն սկսում է նավասարդից, որն, ինչպես վերը տեսանք, հոմանական անշարժ օրացույցում Մարտ ամիսն է: Այստեղ հեղինակը, նախ, շոշափում է նավասարդի կրկնակ շունենալու հարցը և րացատրում: «Վասն դի արարչութեան աւուրքն, որ յառաջ քան զլինելութիւն մարդոյն էին, որ են Ծ աւր, և կոչին աւել տուրք, այն նաւասարդի ամսոյ կրկին է»:

Ձեռագիր այս հատվածում մեզ համար էականն այն վկայությունն է, որ նավասարդը արավա առաջին ամիսն է համարվել և, ամենակարևորը, որ այստեղ տրամարանական նույնություն կա նավասարդի՝ տարվա առաջին ամսվա և Մարտի միջև: Այդ սլատճառով կարծում ենք, շտրունտկություն մեջ «Կալ ղնաւասարդի ամիս և զիւր կրկին» տողում «ղնաւասարդի ամիս» րաոերը

պետք է հասկանալ ոչ թե որպես որոշակի տմսրվա անուն, այլ որպես տարվա առաջին ամիս, ինչ անուն էլ որ այն կրելու լինելու 1999 ձևադրի 75ա էջում հիշատակություն կա նաև, որ հենքը Մարա ամիսը դիտել են իրրև նոր արավա սկիզբը՝ Ամստեր: Այստեղ ամիսների անունների առաջացմանը վերաբերող հարց ու պատասխանի մեջ ասված է. «Ամսոց անուանք ի սկզբան ոչ էին, այլ սկսեալ յԱդամայ մինչև ի Մովսէս, ղդարնանամուտ առնէին ամենայն աղղք, և ամսոց անուանք ոչ գոյր»:

Այնուհետև պատմում է երրայական ու հոմանական ամիսների անունների առաջացմանը վերաբերող այն ընդ որը, ինչ հայանի է իրեն: Ուշադրավ է, որ, խոսելով ընդ որ աղղբի դարնանամուտը արեմուտա համարելու սովորության մասին, հեղինակը հայերի այդ սովորությունը րացատրելու վերաբերյալ ոչ մի խոսք չի ասում: Անկասկած, եթե հայերը սովորություն չունենային դարնանամուտը տարեմուտա համարել, անպայման հեղինակը կհիշատակելու նշոշուտ, չի կարելի սա պատահականություն համարել, քտնդի հայտնի է, թե մեր մասնագիներն ինչպիսի ղղղություն ու կրքոտություն են ցուցարերում այն ամենն ընդգծելու հարցում, ինչն առանձնահատուկ աղղային-հայկական է: Հենց այդ նույն րնադրի շարունակության մեջ, խոսելով այլ ժողովուրդների ամիսների անունների առաջացման մտսին, հեղինակն ավելացնում է. «...նոյնպէս և այլ ամիսք անուանեցան յում և իցէ. ղոր աւելորդ համարիմ կարգաւ պատմել. Բայց հայոցս ասացիցք: Ապա պատմում է Հայկի ուստերի և դուստրերի անունով հայկական ամիսները կոչելու հայտնի առասպելը: Հնարավոր չէ, որ նույն հեղինակը, նույն հատվածում, մի ավելի փոքր հարցի նկատմամբ այդքան որոշակիորեն նշեր հայկական սովորության մասին խոսելու իր պատրաստակամությունը, իսկ մի այլ, ավելի կարևոր հարցի՝ արեմուտի վերաբերյալ, նման անփութություն ցուցտրերը:

Պատմելով վերոհիշյալ առասպելը, հեղինակը ամիսների հերթական թվարկումն ղարձյալ սկսում է նավասարդից: Նավասարդը, որ հայկական աղղային տոմարի առաջին ամիսն էր և ղուդակշիո հոմանական անշարժ տմսոցուցակի Մարա ամսին, դիտվում էր որպես դարնանային օրահավասարի՝ արեմուտի ամիս: Հեաևարար, հիշյալ հատվածը պետք է հասկանալ որպես ուղղակի ցուցում այն մասին, որ հնադույն ժամանակներում իսկապես հայերը արեմուտ, հեաև-

վարար և հավական տոմարի նավասարդ ամիսը, համարել են դարնանային օրահավաստի օրը⁹։

Կան նաև այլ փաստեր, որոնք ավելի ամրապնդում են հայագիտության մեջ արված այդ եկրակացությունը։

Դիմենք դարձյալ նույն՝ 1999 ձեռագրին։ Մրա 5-րդ էջում Հովհաննես վարդապետ Կողբունի «Բեկնութիւն տօմարի» մեջ, ուր խոսվում է տարվա շորս եղանակների սկիզբը որոշելու մասին, բացատրությունը սկսվում է զարնանամուտից։ Այդ արդեն ինքնին փաստ է, որ դեռ XI դ. դարնանամուտը որպես տարվա սկիզբ էր ընկալվում, այլապես ամբողջ տարվան վերաբերող տոմարական հաշվումներն անհրաժեշտ չէին համարի սկսելը զարնանից։

Կամ Հովհաննես Իմաստասերի «Նորին (Յոհաննու) յաղագս ամսոց հայոց եւ ատնից եւ յաղագս ԴԺ աներորդաց գատկի» աշխատության մեջ կարդում ենք.

«Բայց արգ՝ հաւաստապէս ոչ գիտելով գտցէ վրիպեալ ոչ միայն յայսմ ի միում թուոյ եկամտութեան յաղագս անգր առաջին ամսին հասարակաւորութեան անցանելոյ ըսա յեղանակին գարնանոյ, այլ ե յոլովակի, թէպէտ յանցելումն ոչ, վասն ոչ հնակարգութեան»¹⁰։

Մատենադարանի 6118 ձեռագրի (Տոնացույց) ՏՕա էջում մի հետաքրքիր բեկոր է պահպանվել։ Այստեղ ասվում է, թե ամեն տարի տոները կարգավորվում են մարա ամսին։ Ինչպես երեւում է, այդ սովորությունը գալիս էր գեոեա այն վաղնջական ժամանակներից, երբ նոր արին զարնանամուտն էր համարվում և ամեն տարի, հայկական տոնացույցի առանձնահատկության համաձայն, սնշարժ ամիսների մեջ շարժական տոներն անհրաժեշտ էր լինում կարգավորել։

Անեկրկայորեն պարզ է դառնում, որ դարգացման վաղ փուլերում հայերը զարնանամուտը որպես տարեմուտ էին գիտում։

Բացի տոմարականից, կան նաև մատենագրական այլ տեղեկություններ, որոնք վկայում

են, թե զարնանամուտը շատ երկար ժամանակ հայերի մեջ ընկալվել է որպես նոր տարվա սկիզբ։

Զանգազաոնալով Ագաթանգեղոսի մոտ քաղաքական պատմության հետ կապված փաստերի ժամանակագրական արժանահավաստության խնդրին, հիշենք նրա հաղորդած տեղեկությունները հայոց խոսրով թագավորի պարսից գեմ վարած պատերազմների մասին։ Հայոց խոսրով թագավորը, լուր առնելով, թե Պարսկաստանում Սասանյանները Դարթեններին զահրնկեց են առնում, զորք է հավաքում և հարձակվում Պարսկաստանի վրա՝ Ասսանյաններից վրեժխնդիր լինելու նպատակով։ «Այդ՝ ի միւս ևս ի գլուխ տարւոյն սկսանէր խոսրով թագաւորն Հայոց գունդ կազմել և զօր բովանդակել...»¹¹։ Այդ վրեժխնդրության պատերազմը շարունակվում է տասը տարի։ Բնագրից ըսող եղրակացությունն այն է, որ այդ տարիների ընթացքում հայոց թագավորի արշավանքն սկսվում էր արվա սկզբին՝ պարնանու։ Ըստ երեւոյթին, որպեսզի ժամանակ ունենա մինչև հայոց սաստկաշունչ ձմռան սկսվելը՝ ողմական հաջող գործողություններ ծավալելը։ «Իսկ իբրեւ եկին հասին աւուրք ջերոտ հարաւհոգմն գարուն գրանցն բանալով՝ համբարձաւ թագաւորն ի կողմանցն յանցանի...»¹²։ Ասկայն կարեորը մեզ համար այն է, որ հեղինակն այդ պատմությունն անելիս զարունը նույնացնում է տարվա սկզբի հետ։

Գարնան և նոր տարվա առնի կապը պահպանված ենք գտնում նաև առավել ուշ շրջանի ժողովրդական հոգեբանության և կենցաղի մեջ։

XVII դ. բանասահղծ Նաղաշ Հակոբն, օրինակ, իր մի տաղում գարնան հետ է կապում նոր տարվա առնը.

«Այսօր գարուն է. նոր տարի

Քեզ գրել եմ հաղար բարի,

Դու դարգարած ինձ մոտ արի.

է՛ր նաղ կանես, քեզ ինչ արի»¹³։

Այդ մտայնությունն աճիոփոխ հասնում է մինչև XIX դար, որի մասին պահպանվել են բաղմաթիվ աղագրական վկայություններ և որոնք կապվում են Բարեկենդան տոնի հետ։ Սակայն այդ հարցի քննարկումից առաջ շարունա-

⁹ Տոմարական հաշվումների հիման վրա Դյուլորիեն մարտի 22—նավասարդի 1-ը՝ զարնանային օրահավասարը, տարվա սկիզբ, Ամենոր դարձնելը գնում է մ. թ. ա. 529—532 թթ. 4-ամյա շրջանի տարիներից մեկում։ E. Dulaurier, նշվ. աղ., էջ 182։ Հնարավոր ենք համարում ենթադրել, որ նավասարդի որոշակի ամսվա անուն դառնալը եւ կարելի է վերագրել այդ ժամանակին, կապված հայկական ամիսների շարքում նրա որոշակի, հաստատուն աղ գրավելուն։

¹⁰ «Հովհ. Իմաստասերի մատենագրությունը», աշխատասիրություն՝ Աշ. Արաբամյանի, էջ 281։

¹¹ Ագաթանգեղոս, Պատմութիւն հայոց, Տիգրիս, 1909, էջ 16։

¹² Նույն տեղում, էջ 21։

¹³ Նաղաշ Հովնաթան, Բանաստեղծություններ, Երևան, 1951, էջ 237։

կենք հետեւել Ամանորի հետ կապարված տոմարական փոփոխությունների ընթացքին:

Տեսանք, որ հայ առնարական դրականության մեջ հոռոմեական Մարտ և հայկական Նավասարդ ամիսները նույնացվել են:

Նավասարդ բառը, որ հնդեվրոպական ծագում ունի և մասն է հայերենի մեջ նոր տարի, Տարեմուտ իմաստով, բարդ բառ է, բաղկացած նավա (նոր) և սարդ (աարի) արմատներից¹⁴, «Սարդ-ը» հայերենում մնացել է երիտասարդ, ավսարդ բառերի մեջ նույն իմաստով: Գ. Ա. Մկիթիշվիլին գրում է. »sardi - ուրարաացիների աստվածուհիներից մեկը (տե՛ս 'Darubani): Ակընհայտ է, որ sarduri (աեհ) արքայական տնունը կազմված է այդ աստծո անունից և քանի որ այն պրվում է իշար աստվածուհու ասուրական դադաիարադրով, ապա ուրարաացիների sardi-ն, համարենք, տուրքեստանցիների իշար աստվածուհուն համանման աստվածուհի է եղել»¹⁵:

Ուշադրություն է արժանի նաև, որ ուրարտերեն կաšelardi բառը, որ լուսնի աստծո անունն էր «...»SIN Ծելարդի աստվածը (լուսնի աստըվածը): Այդ դադաիարադրի համար šelardi ընթերցումը ստացվում է № 27 արձանագրության 41-րդ տողից (այդ տողի Dsi — e — la — ar — di համապատասխանում է նույն արձանագրության 7-րդ տողի Dsin)¹⁶:

Նավա կամ ճավ բառը, որ նշանակում է ճուր և ճավասարդ բառարարգությունը պարսկերենից է փոխանցվել հայերենին, միջին պարսկերենի բարրառներում նշանակել է նաև լուսին¹⁷:

¹⁴ Ե. Պողոսյանը իր «Նոր տարեացի տոմարի հին և նոր հայոց քոյն» (Վիեննա, 1952) աշխատության մեջ նախապես արգելադրել է հայերենում այս ծանոթագրությունն է տալիս (էջ 11, ծնթ. 25): Նավասարդ պարսկերենի փոխ առնված բառ մըն է և կը նշանակէ լուսին տարին (2. Հյուսիսային, Հայ քեր., էջ 202): Նախապես արգելադրել է նախապես (նոր տարին, ամսնոր) բառին հայացած ձևն է: Նախապես արգելադրել է ժողովուրդներու հասարակաց բառ մըն է. հայերեն՝ նոր, հին պարսկերեն՝ նեվի, նոր պարսկերեն՝ նեվ, հունարեն՝ նեոս բառ է: Իսկ սարդ-ը (աարի), որուն նոր պարսկերեն ձևն սա է. մեր լեզվի բրիտանական արգելադրել է մեջ անհղծ մնացել է (Գ. Խաչկունց, Բյուրակ, Կ. Պոլիս, 1938, էջ 53, Հմմտ. Հնգ. նախալեզու, էջ 70): Հակոբոս Տաշյան, Ուսումնական հայերէն լեզվի (Վիեննա, 1920, էջ 511): Սեյյա գտնում է, որ սարգը պահելով իր նշանակությունը, խաղաղական տարին բառից է փոխառնված (աեհ) Հ. Անտոյան, Հայերեն արձանագրական բառարան, հ. 5, էջ 69):

¹⁵ Г. А. Меликишвили, Урагские клинообразные надписи, М., 1960, стр. 440.

¹⁶ Նույն տեղում, էջ 382:

¹⁷ P. Horn, Sammlung indogermanischer wörterbücher, IV, Grundriss der V neuepersischen Etymologie, 233, 1045.

Իրանական հիշյալ նավա-ն ծագում է հնդեվրոպական neuo հիմքից: Հնդեվրոպական նույն արմատից է ծագում և ճար բառը, որը կազմված է հիշյալ neuo հիմքից և ro մասնակից, որ ինչպես պարսկերեն, այնպես էլ հայերեն բարրառներում նշանակում է ճուրգված լուսին¹⁸:

Այդ ընկալումը իր արաահայտությունն է գտել նաև ազգագրական սովորույթներում: Վասպուրականում, օրինակ, ընդունված էր, որ մեծ մայրը նորածին երեխային դուրս էր բերում նորած լուսնի դեմ և ասում՝ «նոր, նոր, թաժա թագավոր»¹⁹: Այս նույն սովորությունը կար նաև Հայաստանի այլ շրջաններում²⁰: Մարդիկ հավատում էին, թե նորալուսինը կարող էր րախտովորություն տալ նորածին երեխային: Նույն հավատալիքի զուգահեռ մի արաահայտություն է եղունգի վրա դուրս եկած և որոշ բարրառներում «նոր» կոչվող բծերը նոր հագուստ ունենալու նախանշան համարելու ժողովրդի մեջ նոր նշանակում է նաև ավագ ուրաթ (Հուգայի՝ ութի-ուրաթ) օրը դարձնելու կողմից շար աչքի դեմ պարաաստվող մետաղյա նշանը, որ անպայմանորեն լուսնի ձևն էր ունենում²¹: Ինչպես տեսնում ենք, նշված բոլոր դեպքերում ճուր բառը կապվում է լուսնի հետ: Կարծում ենք, որ ճավասարդ բառի մեջ ճավա բաղադրիչը երբևէ ունեցած պեպ է լինի նաև լուսին իմաստով: Այդ բանը հաստատող մատենագրական վկայություններ կան. «...զդարնանամուտն տարեմուտ առնէին ամենայն ազդը, և ամսոց անուանաք ոչ դոյր, բայց միայն զառաջին լուսինն, դարնան լուսին, անուանէին առաջին և զկնի երկրորդ լուսին, և երրորդ և չորրորդ մինչև ցերկոտանենբորդն»²²:

Եթե սրա հետ նկատի ունենանք նավասարդի մեջ ճավա բառի կապը լուսնի, նորի հետ, դուրս է գալիս, որ ճավասարդ թերևս նշանակել է լուսնի աարի, որ միաժամանակ նշանակել է ճուր տարի, աարեմուտ, ամանոր²³:

¹⁸ Հ. Անտոյան, Դավառական բառարան, Թիֆլիս, 1913, էջ 815: Ս. Ամատունի, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912, էջ 505:

¹⁹ Գ. Մովսեսյանց, Մանանա, Կ. Պոլիս, 1876, էջ 105:

²⁰ «Ազգագրական հանգես», 1897, գիրք Բ, էջ 270: Օ. Նիդադար Կարապետյան, Մասուն ազգագրական նյութեր, Երևան, 1962, էջ 96:

²¹ Ա. Ա. Օգաբաշյան, 1956 թ. Մարտունու գիտաբանական, ԱՐԱ, տ. № 5, էջ 64: Նաև՝ Կ. Մելիք-Փաշյան, Անահիտ գիտահու պաշտամունքը, Երևան, 1963, էջ 70—71:

²² Մատենագրարան, ձեռ. № 1999, էջ 75ա:

²³ Նոր բաղադրիչ Հայկազյան լեզվի, հ. 1, էջ 50: Հ. Անտոյան, Հայերեն արձանագրական բառարան, հ. 1,

Նավասարդի լուսնի տարի իմաստը ամենից շատ կա ամանոր բառի մեջ (որ նավասարդ բառի հայերենն է)։ Այստեղ նոր բառը (չմոռանանք, որ տյն բարբառներում նշանակում է լուսին) ամ տարի բառի հետ արտահայտում է նույն տարեմուտ կամ նոր (նոր-ի, լուսնի) տարի իմաստը։

Եթե դարձյալ հիշենք, որ № 1999 ձեռագրի վերը հիշված հատվածում «նոր լուսին», «առաջին լուսին» համարվում է զարնանային լուսինը, որ է զարնանային օրահամարի լուսինը, ապա հասկանալի կդառնա, թե ինչու մեր մասենադրության մեջ նույնություն են տեսնում զարնանային օրահամարը կրող մարտ ամսի և նավասարդի՝ տարեմուտի ամսվա միջև։ Այն ժամանակից, երբ մենք զբաղվում կամ բանավոր տեղեկություններ ունենք նավասարդի մասին, այն բնական է, որ իրեն նոր տարվա սկիզբը, տարեմուտ, Ամանոր։ Հատկանշական է, որ հենց այս, ամենանախնական իմաստով, բառը պատմական Հայաստանի որոշ շրջաններում պահպանվել է մինչև մեր օրերը²⁴։

Հայտնի է, որ հայկական ամիսների ցուցուկում նավասարդ կոչվում է առաջին ամիսը։ Ասկայն հարցն աչն է, որ նավասարդ միշտ որոշակի ամսվա անուն չի եղել։

Աղղային արևդակնային ստմարի տոնածնահատությունը համաձայն, Ամանորը թափառիկ էր։ Նավասարդ (Ամանոր) անունը կրում էր այն ամիսը, որի հետ համընկնում էր նոր տարին։ Աղղային լուսնային, ապա լուսնարեկային տոմարի համաձայն Մարտ-Նավասարդ ամիսն իր դարնանային օրահամարով Ամանորի կրողն էր և որովհետև նավասարդ սկզբում նշանակել է միայն նոր տարի, նոր արարվա սկիզբը, կամ, որ միեւնույն է՝ առաջին լուսին, այդ պատճառով այն ամիսը, որի ընթացքում անցել էր ունենում զարնանային օրահամարը, համարվում էր նավասարդ, մտնականդ որ դարպացման այդ փուլում ամիսներն անուններ չունեին։ Հետագայում միայն, երբ կանոնավորվում և հաստատուն են դառնում տոմարական հաշվումները, նավասարդ է տեղափոխվում տարվա առաջին ամիսը։ Տարվա ամիսների հերթական շարքում նավասարդը առաջինը դարձնելով, տոմարագետները այդ տոմարական կարգի նկատմամբներից բացի, ամենայն հավանականությամբ, նկատի են ու-

նեցել այդ անվան նաև տարեմուտ՝ Ամանոր իմաստը։

Հովհան Մամիկոնյանը Նավասարդը հիշատակում է որպես ամսանուն։ «Եւ սուսն արքոյ կարապետին տայր կատարել, որ ար մի էր նաւաւարդի», — կարդում ենք նրա «Պատմության» մեջ²⁵։ Փավստոս Բուզանդը, Արշակի կողմից Գնելի շարանենդ սպանության պատմությունն անելիս, նույն հատվածում նավասարդն առաջին անգամ օգտագործում է որպես ամսանուն, երկրորդ անգամ՝ իբրև առնի անուն²⁶։ «...Ապա զնաւասարդաց ժամանակօքն առնէր խորհուրդ թաւաւորն Արշակ, կոչել առ ինքն...» և ապա «...եթէ թագաւորն Արշակ ոչ կամեցեալ դաօնս նաւասարդաց առանց քո անցուցանել»։ Ինչպես ցույց են տալիս բերված վկայությունները, հայոց հնագույն սատենագիրներին նավասարդն արդեն հայտնի էր և օգտագործվում էր իրեն ամսանուն։ Իսկ երբ ցանկանում էին օգտագործել այն իբրև տոնի անուն, անպայման այդ նշում էին։ Ավելին, Ապաթանդեղոսը ուղղակի ասում է, որ նավասարդը հենքի ըմբռնում էին իրեն ամսանուն, իսկ նոր տարվա տոնը անվանում է «Ամանորոյ ամենաբեր նոր պտղոց տոն», նվիրված «Հիւրերնկալ դիցն Վանստորի» և նշում է, որ այդ տոնը կատարվում էր նավասարդի օրվան (տարվա առաջին օրը) նվիրված ուրախության առթիվ։ «Եւ զհիշաաակս վկայիցն բերելոց ի տօն մեծ հոշաբել, սնոտեացն պաշաման ի ժամանակի՝ դիցն Ամանորոյ ամենաբեր նոր պտղոյ աօնին, հիւրերնկալ դիցն Վանստորի, գոր յառաջագոյն իսկ ի նմին տեղուջ պաշաէին յուրախութեան նաւասարդ աւուր։ Զի ժողովել ի յիշաաակ մեծի երանելոյն Յովհաննու և սրբոյ վկային Ասաուծոյ Աթուհիս զինէի՝ յայնմ աւուր խմբեալ ի նմին յաւանին աօնեսցին»²⁷։

Այսպիսով, կարելի է ենթադրել, որ նավասարդի որոշակի ամսանուն դառնալը տեղի է ունեցել ավելի ուշ, քան երբ այն Ամանոր նշանակությամբ մտել է հայոց լեզվի մեջ, այսինքն՝ երբ հայերն ընդունելով լուսնա-տրեգականային տոմարը, պեաք է որոշակիորեն սահմանադժեկն արարվա մեջ մտնող ամիսները և նրանց տային առանձին անուններ։ Դրա արձագանքն ենք դնում Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ, ուր

²⁵ Հովհան Մամիկոնյան, Պատմութիւն Տարօնոյ, Երեւան, 1941, էջ 106։

²⁶ Փավստոս Բուզանդ, Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1912, էջ 181—182։

²⁷ Ագաթանգեղոս, նշվ. աշխ., էջ 435, 836։

էջ 179։ Ստ. Մալխասյան, Հայերեն բացատրական բառարան, հ. 1, էջ 55, 179։

²⁴ Տե՛ս ԱՐԱ, 1956—1972 թթ. գիտարշավների ժամանակ մեր գրի առած նյութերը։

պատմվում է, որ երբ Արաաշես թագավորի օրոք ստեղծվում է հայկական տոմարը, Արտաշեսը առանձնակի ուշադրություն է դարձնում շարսթներին, ամիսների հերթականության և առմարական տարվա հաստատման վրա:

«Զի թեպետ և այլն ամենայն, զի յիշատակեցաք յառաջագոյն ճառիցն կարգք և սովորութիւնք զգեղեցիկք հաստատեացն ի Վաղարշակայ և յայլոց առաջնոց թագաւորացն՝ այլ ի մեծամեծ արուեստից և ի գիտութեանց ունայնացեալք էին, որպես հէնից և ասպատակաց պարապեալք, և այսպիսի գիտութեանց կամ անփութ արարեալք և կամ ոչ հասեալք. զշարաթուց ասեմ և զամսոց և գտարեաց ըրորմանց»²⁸:

Մովսես խորենացու հայտնի հատվածում, ուր նա պատմում է հայոց Տիգրան թագավորի կողմից իր եղբայր Մաթանի գերեզմանի վրա բազին կառուցելու մասին, նավասարդն արգեն օգտագործվում է իրրև ամսանուն:

«Յորում պատմէ մեհենիցն պաշտամանց՝ վերջին Տիգրանայ աշքայի հայոց սլաաուեայ զգերեզման եղրօրն իւրոյ Մաթանայ քրմապետի ի Բազնանց աւանի, որ ի Բազրեանգ գաւառի, Բազին ի վերայ գերեզմանին շինեալ զի ի զոհիցն ամենայն անցաւորք վայելեցցեն, և ընդունեցին հիւրք երեկոթիւք: Յորում և զկնի Վաղարշ տօն աշխարհախումր կարգեաց ի սկզբան ամին նորայ, ի մուտն նաւասարգի»²⁹:

Ակնհերև է, որ Մովսես խորենացու մոտ պահպանված են այն ժամանակների արձագանքները, երբ նոր էր ձևավորվում հայկական տոմարը, երբ աստղագիտական, տիեզերագիտական նախնական գիտելիքները առմարի ու առմարագիտության աեսք էին ընդունում:

Նավասարգի և ամսանուն, և տարեմուս իմաստով օգտագործման օրինակի հանգիպում

²⁸ Մովսես Խորենացի. Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1913, դիրք 2, գլ. ԾԹ, էջ 186:

²⁹ Նույն տեղում, դիրք 2, գլ. ԿԶ, էջ 200: Մեհենական գրականությունից Պատմահորը ժառանգված այս տեղեկությունը անգնահատելի մի մասունք է հայոց նախաքրիստոնեական կենդանի, ավանդությունների, մտածողության մասին: Հստ այդ հաղորդման, հայոց Ամանորն իսկապես առատության և զոհարարական հմայությունը զարթ տարին ապահովելու շնչոտ ունի, մասնակից անելով դրան պատահական անցորդներին, մի սովորություն, որ մնացել էր հայոց կենցաղում որպես Ամանորի տոնական ցիկլի հատկանիշ՝ մինչև մեր օրերը:

Խորենացու պատմության այս հատվածը բազմիցս եղել է ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում և կարելի է կարծել, թե այն սպառնում է Ստեփան հեթանոս Հայաստանի դիցարանի ուսումնասիրությունը մեղ զարձալ վերագրվում է Պատմահորը:

ենք նաև ավելի ուշ՝ XVI դարում, Առաքել Դավրիժեցու մոտ: «Այդ՝ գալն Զալալօղլի Արագարին երկու անգամ եղև. առաջին գալն ի սկզբան ՌԾԴ (1605) թուին, յորում նոր էր մուտ նաւասարգի ամսոյն... Եւ երկրորդ գալն այս է՝ որ եկն... եւ զարձաւ, ՌԾԵ (1606) թուին, ի սկիզբն տարեմուսին ի ժամանակս առաջնոյ աշնան», — հաղորդում է նա³⁰:

Գրիգոր Մազիսարոսի «Թղթերում» պահպանված Արաաշես Ա թագավորին վերագրվող երգը շատ է հիշատակվել հայագիտության մեջ³¹, Հաականշական է. որ նավասարգյան այգ երգը զարձալ կրում է ուրախ, առատ, շեն ու հարուստ օջախի, որսորդության, խնջույքի, կրգի և երաժշտության նույն պատկերը, ինչը այնքան ընդունելի էր առհասարակ ամանորյա հմայական երգերին:

Ո՛ տայր ինձ գծուս ծխանի

Եվ զառաւօտն նաւասարգի

Զվագելն եղանց

Եվ գվարգելն եղջերուաց.

Մեք փող հարուստք

Եվ թմրկի հարկանէաք,

Որպես օրէն է թաղաւորաց³²:

Ակնհերև է, որ գարերի ավերածությունից փրկված նավասարգյան առնակատալության փրշուրները, որ մեղ էն հասել այս երգի մեջ, զարձալ տալիս են Ամանորի նույն պատկերը, ինչ ունենք այլ աղբյուրներից:

Անհրաժեշտ է տվեալները միայն, որ պատմահական շպետք է համարել, որ Մովսես խորենացու մոտ հայոց տոմարը հաստատելը տյգ նույն թագավորին է վերագրված: Հնարավոր է, որ հայ պատմագրությունը այգքան կարևոր գեր կատարած մի խոշոր իրադարձություն կապեր լեզենգար թագավորի անվան հետ, անուն, որի շուրջ այնքան սիրով և երախտագիտությամբ հյուսվել էին հերոսական և ոգրերգական վիպասներ և որոնք զարեզար պատմվում էին, հարստացվում, գեղեցկացվում:

Հայոց աղգային տոմարի ձևավորման այգ վաղնջական ժամանակների արձագանքը մեր մատենագրության մեջ պահպանվել է նաև մի այլ ավանդության ձևով, որ հաղորդում է Անանիա Շիրակացին:

«...Զի Հայկ ոմն անուն աղեղնաւոր հսկայ՝

³⁰ «Պատմութիւն Առաքել վարդապետի Դարձեցոյն», Վաղարշապատ, 1896, էջ 78:

³¹ Մ. Արեղյան, Երկեր, հ. Ա, Երևան, 1966, էջ 121—122: Այսանգ այն վերագրվում է Արտաշես II-ին:

³² Կ. Կոստանեանց, Գրիգոր Մազիսարոսի Թղթերը, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 87:

յազգէ Յաբեթի որդւոյ, Նոյի, եկեալ ի րաբելոնէ՝
աիրեսաց հայոց, և բնակեալ ի Հայս. և յանուն
նորա կոչուցն հայք. նոյնպէս որդւոց և դստերաց
նորա եգին ի վերայ սմսոյդ՝ վասն մեծարանաց
հօրն և զաւակացն. և են այսոքիկ. Նաւասարդի,
Հոսի, Սահմի և Մահեկի, Արեգ և Մարերի, դըս-
տերք Լին Հայկին, Տրէ, Քաղոց, Արաց և Հրոսից,
որդիք էին Հայկին, Իսկ մարդաց և Հարավանց,
դոր այժմ Ահեկի կոչեն, այս ի գործոց անունա-
ցան, զի ընդ այն ժամանակս ամսոնայինք էին
սոքա³³:

Ավանդութիւնը հարեանցիորեն հիշատակում
է նաև Հովհ. Իմաստասերը. «...Հայկն,—ասում
է նա,—առաջին նահապետն հայոց, զամիսքդ
կարդեաց և զանունս ուսաբաց և զստերաց
իրոց ամսոյդ կոչեաց»³⁴:

Ավանդութիւնը տվյալ ղեպքում հեաքքերի
է նրանով, որ հնարավորութիւն է տալիս ենթա-
դրելու, որ իսկապես Նավասարդ անունը (Ամա-
նորի նշանակութեամբ) մեր լեզվում ինչ-որ որո-
շակի ժամանակ է գործել որոշակի ամսվա անուն,
և ոչ թե ի սկզբանե ունեցել է այդ իմաստը. Իսկ
մեղ հասած ավանդութիւնները պեաք է համարել
այն ժամանակների արձագանքները, երբ Նավա-
սարդը հայկական աղղային տոմարում դրավում
էր իր հաստատուն տեղը, դառնում էր տարվա
առաջին ամիսը:

Տոմարական կարդի մեջ կաաարված փոփո-
խութիւնների հետեանքով Նավասարդը որոշակի
ամսվա անուն դառնալով (Ամանոր, Տարեմուտ
իմաստով), ամիսների հերթական շարքում հա-
մարվեց առաջինը և զուգակշիռ դարնանային
օրահավասարին՝ հոռմեական մարտ ամսին:

Հայոց տոմարի պատմութեան, ինչպես նաև
առնարական ու առնարաղիական այդ րարդ խըն-
դիրների մասին հայագիտութեան մեշ արտահայա-
վել են առ այսօր իրենց դիտական արժեքը պահ-
պանած տեսակետներ: Դեռևս Ղևոնդ Ալիշանը
կարծիք է հայանել, որ հայերը հնում Ամանորը
տոնել են դարնանային օրահավասարին³⁵: Նույն
խնդրին անդրադարձել են Լ. Անմյոնովը³⁶ և Աշ.
Արրահամյանը³⁷:

³³ Անանիա Շիրակացի, Տիեզերագիտութիւն և տօմար,
էջ 76—77:

³⁴ Վեովհ. Իմաստասերի մատենագրութիւնը, էջ 224:

³⁵ Ղ. Ալիշան. Յուշիկը հայրենեաց հայոց, հ. 1, Վենե-
տիկ, 1869, էջ 88: Նույնի՝ Վէին հավատք կամ հեթանոսական
կրօնք հայոց, Վենետիկ, 1895, էջ 139:

³⁶ Լ. Անմյոնով, Հայկական տոմարի մի քանի հարցերի
մասին, Վատենագրանի գիտական նութերի ժողովածու,
Երևան, 1941, № 1, էջ 24:

³⁷ Աշ. Արրահամյան, Տարեթվերի և ամսաթվերի գոր-

Սակայն դարնանային օրահավասարով սկըս-
վող տոմարական այդ կարգը հետագայում,
Հայաստանի պետական-քաղաքական կյանքի
դարդացման հետեանքով դադարեց զոհացուցիչ
լինելուց, և տոմարագետների առաջ նոր խնդիր
ծառացավ՝ դտնել կյանքի նոր փուլին համապա-
տասխանող տոմար:

Այդ նոր տոմարը տարեսկիզբը դարնանային
օրահավասարից աեղափոխեց աշնանային օրա-
հավասար:

Միջնադարյան հայկական առնարի մեջ
արտահայտութիւն է դաել տոմարի դարդաց-
ման ինչպես առաջին, այնպես էլ հաջորդ փուլը:
Մաղաքիա Օրմանյանն, օրինակ, դտնում է. որ
հայկական առնարի մեջ խառն օղտադործվում
են տոմարական երկու կարդն էլ՝ արեղականայինը,
սրով հաստատվում էին Աստվածահայանութեան
րոլոր առնները (հունվարի 13—15-ը) և լուսնա-
յինը՝ որով որոշվում էին մնացած տոնական օրե-
րը³⁸:

Տոմարական հաշվումների հիման վրա Լ.
Անմյոնովը գտնում է. որ լուսնա-արեղականային
տոմարը, որի նոր աարվա առնը Նավասարդի 1-ն
է (օղոսաոսի 11-ը), հայերը ընդունել են մ. թ. ա.
406 թ.³⁹: Հետեաբար, Նավասարդը տարվա
ամիսների շարքում հաստատուն տեղ ունեցող
ամիս գտնալուց առաջ, արդեն ունենալով միայն
Տարեմուտ-Ամանորի նշանակութիւնը, աեղա-
շարժվում էր լուսնա-արեղականային տոմարի
առնանհատկութեան հետեանքով:

Ըստ առնարական հաշվումների Դյուլորին
մարաի 22—Նավասարդի 1-ը՝ դարնանային օրա-
հավասարը, աարվա սկիզբ, Ամանոր դարձնելը
դնում է մ. թ. ա. 529—532 թթ. 4-ամյա շրջանի
աարիներից մեկում⁴⁰: Հնարավոր է ենթադրել, որ
Նավասարդի որոշակի ամսվա անուն դառնալը
ևս կարելի է վերադրել այդ ժամանակին, կապ-
ված նրա հայկական ամիսների շարքում որո-
շակի, հասաաաուն աեղ դրավելուն:

Նավասարդ րադից րացի, հայերը Նոր աար-
վա առնի համար ունեին նաև Ամանոր րաոր⁴¹:
Երբ նրանք ընդունեցին ավելի կատարյալ տոմար,
Նավասարդը դարձավ տարվա առաջին ամսվա

ծածութիւնը հայ մատենագրութեան մեջ, Վէյիածին, 1956,
№ 1—3, էջ 55:

³⁸ Մաղաքիա Օրմանյան, Միսական րաաարան, Անթի-
լիաս, 1957, էջ 11—12:

³⁹ Լ. Անմյոնով, նշվ. աշխ., էջ 24:

⁴⁰ Dulaurier, նշվ. աշխ., էջ 189:

⁴¹ Հիշատակված անուններից րացի, Նոր տարվա տոնը
հայտնի է եղել նաև այլ՝ Տարեգլուխ, Տարենոր, Տարին-
գլուխ, Նորարեր, Ամանորարեր անուններով:

անունը՝ Սակայն Ամանորը շարունակում է թափառել նաև այս առմարում։ Այդ պատճառով, ինչպես մեր քննարկած մասնագրական տոմարական նյութերը ցույց են տալիս, նավասարդը օգտագործվում էր և որպես տարվա առաջին ամսի, և որպես Տարեմուտի, Ամանոր տոնի անվանում։ Նավասարդը, որ կապված էր տարվա առաջին ամսի հետ և ավելի հասկանալի էր իր Տարեմուտ, Ամանորի իմաստով, աստիճանաբար դուրս է մղում Ամանոր բառը և բռնում նրա տեղը։

Հայկական տոմարի առանձնահատկության համաձայն, Ամանորը շարժական էր։ Սակայն հեթանոս Հայաստանում առմարական հաշվումները ճիշտ կատարելու համար պայմանականորեն Ամանորը համարում էին օգոստոսի 11-ը, Հայկյան շրջանի ապոկաստագի օրը⁴², Վերջինս նավասարդի մեկին համընկնում էր մ. թ. ա. 428 թ.։ Այս թիվն էլ հեթանոսական Հայաստանում

պայմանականորեն հիմք էր ընդունված տոմարական հաշվումների համար։ Պաշտոնական տոնացույցներում այդ օրը շարժական էր։ Սակայն նույն տոնացույցի առանձնահատկության համաձայն, ամիսներն արդեն իրենց հերթական տեղն ունեին, և նավասարդը հայկական անշարժ ամսացուցակում առաջին ամիսն էր, նոր տարվա տոնի կրողը։

Ամանորի այս պայմանական սկիզբն էլ մտնում է տոմարագիտության մեջ և անցնում գրավոր աղբյուրներին։

Պաշտոնական տոմարի մեջ կատարվող փոփոխությունները, բնականաբար, աստիճանաբար մտնում էին նաև ժողովրդի կենցաղի մեջ և ամրանում այնտեղ։ Մանավանդ այդպես էր այն տոների հետ, որոնք պաշտոնական տոմարից անկախ պոլյություն ունեին ժողովրդի կենցաղում, ինչպիսին էր նավասարդը։

ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՏՈՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՊՐՈՒԿՆԵՐԸ XIX—XX դդ.

XX դ. սկզբին Հայաստանի մի քանի աղյուսակային շրջաններում նավասարդը դեռ հիշվում և տոնվում էր որպես նոր տարվա տոն։ Միայն վերջին 50 տարվա ընթացքում է այն դուրս մղվել ասպարեզից և իսպառ մոռացվել նույնիսկ այն շրջաններում, ուր մինչ այդ տոնվել էր որպես նոր տարի։ Այսպես, Եր. Լալայանի հաղորդման համաձայն, Ախիսանում և Զանգեզուրում նավասարդի մեկը աստիճանաբար է համարվել¹։ Ասկայն 1959 թ. այդ շրջաններում կապարած մեր շրջադաշտայինների ժամանակ նման ոչ մի բանի չհանդիպեցինք։ Ըստ որում, հատկապես եղանք այն դիտելով, որոնք մատնանշում է Եր. Լալայանը։ Գորիսի շրջանի դիտելով (Քարահունջ, Շինուհայր, Խանածախ) մի քանի ծերունիներ

հիշում էին, որ մինչև 1920-ական թվականները նավասարդը համարվել է նոր տարի։ Դրանից հետո նավասարդի տոնը, որպես նոր տարվա տոն, մոռացել են։ Բայց նրա հետ կապված ծիսական որոշ սովորույթներ հիշվում են տակավին²։ Դրանցից են հատկապես տների երգիկներից շարոց կախելը, նվերներով իրար այցելելը և մանավանդ այդ օրը անպայման հաբիսա եփելու սովորությունը։

Նույն երեւոյթի տեղի է ունեցել նաև Հին Նախիջեանի հայերի կենցաղում։ Եթե Ա. Զելինսկու հաղորդած տվյալներով դեռևս անցյալ դարի վերջերին նավասարդի տարեմուտ լինելու վերաբերյալ հավաստալիքները այդ շրջանի բնակչության կենցաղում որոշակի տեղ էին դրավում, ապա այժմ, մեղ հայտնի հինգ բնականներից ոչ մեկում, որոնք բոլորն էլ XX դ. 20-ական թվականներին վերաբնակվել են Երևանում, նույնիսկ 60—70 տարեկան ծերունիները չեն հիշում, որ իրենց երիտասարդության ժամանակ նավասարդը տոնված լինի որպես նոր տարի։

Այն քիչ աղյուսակային շրջաններում էլ, որտեղ նավասարդը տակավին հիշվում է որպես նոր տարվա տոն, մոռացված են այդ տոնի հետ

⁴² Ապոկաստագ-Տարին 365 և 1/4 օր ընդունելով, արեգակնային առմարում 4 տարին մեկ անգամ Ամանորը 1 օրով առաջ էր ընկնում (այսպեղից, այդ տոմարի մեջ տոների շարժական լինելը), և հաջորդաբար համընկնելով ասարվա բոլոր օրերին, որոշ ժամանակից հետո վերադառնում էր իր նախկին տեղը։ Այդ կետն էլ ապոկաստագն է, իսկ այդ ամբողջ ժամանակամիջոցը, որի մեջ թափառում էր Ամանորը, հայերն անվանում էին «Հայկյան շրջան», որ տեղում էր 1468 տարի։ Ապոկաստագի տարին հայերն անվանում էին «Նահանջներու նահանջ» տարի (անհ. Մ. Օրմանյանի և Լ. Անճյոնովի նշված աշխատությունները)։

¹ «Աղյուսակային հանգե», 1998, հ. 7, գ. 1, էջ 249, գ. 2, էջ 106։

² Ա. Ա. Օղաբաշյան, 1959 թ. գիտարշավ, ԱՐԱ, տ. 30, 4, էջ 32։